

բէն մինչև ցլերը՝ ինքն յափշտակեց
հանդիսականաց ուշադրութիւնը, և
այն աստիճանի փայլեցաւ, որ եթէ

միւս դերասանը խաւարած ըլլային,
ինքն միայն ամենուն տեղ բաւական
էր:

Աւարտն միասնաբար:

ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ

ԹԱԳԱՒՈՐ ԼԵՐԱՆՑ

(Տէս էջ 171):

Դ

ՀԱՃԻ ՍԴԱԻՐՈՍ

Տեմբերի դէպ յԱթէնս իրաւ, միանձն դէպ
իւր մեղուաց տեղին սկսաւ վեր ելնել, մեր նոր
տեսարէն ձգեցին զմեզ ճանապարհի մը մէջ՝ որ
իրենց թագաւորին բանակովայրը կ'առաջնոր-
դէր: Սիմընս տիկինն գիմագարձուծեան ցոյց
տուաւ՝ չուզելով քայլափոխ մ'անդամ յա-
ռաւ երթալ: Աւագակքն սպառնացան զինքն ի-
րենց բաղկաց վրայ բարձրացուցած տանելու-
նա յայտնեց՝ թէ պիտի չթողուր որ զինքը տա-
նին, բայց իւր աղջիկն յորդորեց զտիկինն ա-
ւելի զընդդադն գտնուելու, յոյս տալով՝ որ
պատրաստ սեղան պիտի դնէր և Հաճի-Սքաւ
րոսի հետ նստածաշէր: Մարիաննա աւելի զար-
մացած էր քան թէ վախճած. ստորակարգեալ
աւագակնքն՝ որք բռնեւ էին զմեզ, տեսակ մը
մարդավարութեան ցոյց տուած էին, ոչ զոք
կրկնած էին և ձեռքերն իրենց գերեալներէն
հեռու բռնած. փոխանակ իրենք զմեզ կողոպ-
տելու՝ խնդրած էին որ մենք անձամբ ունե-
ցածն իրենց յանձնէնք, ուշ գրած էին որ
տիկինս պիտի չնստէր օդեր կը կրէին, և ձեռնոց-
նին անգամ հանելու ազգ ըրած էին. որով բո-
լորովին անմասն էին արքա աւագակքն Սպանիոյ
և Իտալիոյ մէջ գտնուած աւարտաւորներէն,
որք մատանի մը ստանալու համար՝ մատը կը
կտրէին, և մարդարտի կամ աղամանդի մը հա-
մար՝ ունեան բլծակը կը փրցնէն: Բովանդակ
մեղի սպառնացուած չարքէն՝ փրկանքի մը հա-
տուցման կը վերածուէր, բայց աստի՛ յոյս կար
նաև ձրի ազատութիւնն ստանալու. վասն զի
ինչպէս կարելի էր մտածել որ Հաճի-Սքաւ-
րոս կարենայ աւանդ պատուհաս կրելու՝ զմեզ

իր քոյն արգելուլ, մայրաքաղաքէն, արքու-
նիքէն, յունական բանակէն, Իրիտանիոյ թա-
գուհոյն գնդէ մը և անգղիական պատերազ-
միկ հակող նաւէ մը՝ հինգ մղոն հեռաւորու-
թեամբ: Այսպէս կը խորհէր Մարիաննա: Իսկ
ես յակամայս Միսգրայի պզտիկ աղջկանց պատ-
մութիւնը միտքս կը բերէի, և արտում էի: Կը
վախնայի որ չըլլայ թէ Սիմընս Տեկինն՝ իր աղ-
ջապանն ընդգիծութեամբն, իւր դուստրը մեծ
վտանգի մը ենթարկէ, և կը մտածէի՝ ըստ կա-
րելոյն շուտով՝ իւր վիճակը իրեն յայտնել:
Նեղ ճամբայէ մը իրարու ետեկն կը քալէինք,
և մեր վայրագ ճանապարհորդակիցք զմեզ մէկ-
մէկէ բաժնած էին: Անվերջանալի կը թուէր ինձ
ճամբան, և տասն անգամէն աւելի հարցուցի թէ
արդեօք շուտով պիտի հասնինք: Ահաւոր էր
չորս կողմի տեսարանն. ապալելիկ փայտն իւր
պտտառուածոց միջէն հազիւ տեղի կու տայր՝ որ
բարձրանայ դաւար կաղնոյ մացառ մը, կամ
փշալից թիւմի թփիկ մը՝ որ մեր օրունից կը
փակէր: Յաղթող աւագակքն ամենեւին ուրա-
խութեան ցոյց չէին տար, և իրենց յաղթական
ընթացքն՝ յուշարկաւորութեան գնացողաց ե-
րևոյթ ունէր: Մատնաշափ հաստութեամբ զը-
լանկներ ըլուծեամբ կը ծխէին: Ոչ ոք իւր
ընկերին հետ կը խօսէր. մէկը միայն երբեմն
երբեմն քննային երգ մը կը մոմաւոր: Աւերա-
կաց նման տխրատեսիկ է այս Ժողովուրդս:

Մետասաներորդ Ժամուն միջոյնները՝ շան
վայրագ հայտն և մը բանակատեղւոյն մօտ ըլլա-
նիս մեղի իմացուց, տասն կամ ասուներկու ա-
հագին շներ, մոզիներու նման խոշոր, ոչխար-
ներու պէս գուռը մազերով, ակունկն ցուցնե-
լով՝ մեր վրայ սկսան վազել: Մեր պաշտպա-
ններ քարէ հարուածներով անոնց զիմաւորե-
ցին և քառորդ Ժամուն թշնամութենէ վերջը
խաղաղութիւնն տիրեց: Այս հեւրատեսաց գա-

զաններն Լեռնաց Թագաւորին յառաջխաղաց պահապան գունդերն են, որք հոտաւորաւով ճանչցան մեր գունդը, ինչպէս մաքսաններգողաց շուններն հոտեն կը ճանչնան զմորսատունն: Ինչոյ յայսմ միայն չամբոգփր իրենց արուեստուն, այլ այնչափ սաստիկ է եռանդներն՝ որ երբեմն երեսմէ կը գիշատեն անշնամ հովիւ մը, մուրեակ ճանապարհորդ մը, կամ նոյն իսկ Հաճի-Սգաւորսի ընկերներէն մին: Հին սուլդանս ներու պէս, որք իրենց ենիշէրինէր կը խնամէին, Թագաւորն զսասնը կը անուգրէր, սակայն միշտ կասկածելով անոնցմէ գիշտուելէ:

Թագաւորին բանակատեղին ետին կամ ութ հարիւր մեզր մակերեւութիւ տափարակ բլուր մը էր, ի զուր կը փնտռուէ՝ հոյ մեր յաղթողաց վրանայէն: Սազակներն սպարախուսան չեն, նաև ապրիլի երեսունին՝ րոց ոգոյ մէջ կը քնանան: Ոչ յափշտակուած իրաց չեղձակոյտներ, ոչ զեռուզուած գանձեր, և ոչ այլ ինչ՝ որ կը յաւատարկ գտնուիլ աւազակաց խմբի մը կէտքոնացուցին՝ չկրցայ սենել: Հաճի-Սգաւորս աւարը վաճառել տալու հոգն իր վրան աւած է իւրաքանչիւր ոք իւր սունկէլը կ'ընդունին արծաթակոյ գրամով, և զոր ըստ հաճոյս կը գործածեն: Ոմանք աւաւորոյ չըմանի մէջ կը գնեն զայն, այլք Աթենքի մէջ տուններ կը գրաւեն, Եմանք ալ իրենց գեղերուն մէջ երկիրներ կը գնեն, ոչ ոք կը վառնի աւազակութեան արգիւնքը: Մեր հոն հասնիլն ընդմիջէք քանակ հինգ կամ երեսուն անձանց նախաձայն, որք հաց և պանիր ձեռքերնին՝ գէպ առ մեջ վազեցին: Գլխաւորն իւր զինուորները կը կերտարէ տմէն օրից արուել իրենց օրական բաժինը՝ հաց, իւղ, գինի, պանիր, ձիւրիկի, Թափաղաղեղ, գառն ձիւթաւորու և միս իոկ՝ ըստ Թոյլտուութեան կրօնից: Ճաշակի փորձ անձինք՝ որ մուլը կամ ուրիշ ընդգեղներէր սուակ կ'ուզէին՝ կրնան լեռան վրայ համեմունք ժողովել: Աւազակք, ինչպէս նաև Ժողովրդեան ուրիշ գաւերն, քիչ անգամ կերակրոյ համար կրակ կը վառեն, այլ պաղ միս և հուռ ընդեղէն կ'ուտեն: Կը գիտէին որ չորս կողմերնիս պաշարողք՝ ամենայն խղճահարութեամբ կը զգուշանային պահուց օրիակ: Համարձման նախընթաց օրն էր, և այս քաջ մարդիկն՝ որոց ամենէն անմեղն գէթ մարդու մը կենաց պարտաւորութիւնն իր խղճին մէջ կը կրէր՝ չէին ուզեր վառելիս ապրօով մի իրենց ստամբը բռնաւարելէ: Անշնան թեմէն մեղք մի էր իրենց համար՝ հրոցանի ծուլը ցուցնելով՝ երկու անգիւպցի տիկնայք կալանաւորէի, Սիմըն տիկինն Համարձման նախընթաց օրը գառան միս ուտելով՝ շատ աւելի ծանր մեղանք էր:

Մեր պահանդէք լիովին յագեցուցին իրենց ընկերաց հետաքրքրութիւնը, անհամար հարցմունք եղաւ իրենց, որոց ամենուն պատաս-

խան տուին: Յափշտակած աւարին մէջուղ բերին. և իմ արծաթեայ ժամացոյցս անձնասիրութիւնս գոհացնող գիրք մ'ունեցաւ: Մինչդեռ այս աւաղին տեսութեան միջոց Մարիան նայի ոսկէի զարդ (savonnette) հաղեւ կը գիտուէր, հասարակաց զարմանաց ուշագրութիւնը իմ ժամացոյցս գրաւած էր, որով և այն յարգական զարմանաց մաս մը առ իս կ'անգրաս, գոռնար: Այս պարզ մարդկանց գառման համատե՛ այնպիսի Կանն մի ունեցողը՝ լորտէ զատ ուրիշ բան չէր կրնար ըլլալ:

Աւազակաց հետաքրքրութիւնն տաղտկացուցիւ էր, բայց ոչ լիւր: Առ իրենցմէ մեղք հետ իրեն ընդ գերուղ վարուելու կերպ կը ցուցըներ, գիտէին որ իրենց ձեռքն ենք, և թէ չուտ կամ ոչ՝ ոսկի ոգումարի մը հետ զմեզ պիտի փոխանակէին, բայց ոչ ոք իրենցմէ այս պարագայէս օգուտ քաղելով կը խորհէր փնտս հաւցընել և կամ 'ի յարգանաց պակասիւ: Ուղղախոսութիւնն, Յունաց այս անկորուստ յատկութիւնն, զմեզ նկատել կու տար իրենց՝ երևաւոր բնութիւնը մը ներկայացուցիւնէր և նաև մասամբ իւրեք գերագոյն իրենցմէ: Յաղթող բարբարոսութիւնն՝ գաղտնի յարգանք կու տար յաղթեալ քաղաքահանութեան: Իրենցմէ բազմագոյնք աւաղին անգամ կը տեսնէին ևւորպաւ կան զոհատուց ձեւ: և ասոնք մեր չորս կողմը կը գառնային, ինչպէս նոր աշխարհին բնակիչներն Գոլոմոսիո հետ եղող Սպանիացուց չորս կողմը: Մածկարար վէրնալցեալութիւնս գիպակը կը շջափէին գիտնալու թէ արդեօք ինչ նիւթն չէ. նուաճ է. թերեւ փափագ իսկ ունեցած ըլլան բոլոր զգեստներն հանել և մէկիկ մէկիկ քննել, և զուգէ իրենց անհաճոյ իսկ պիտի չըլլար զնա երկու երեք կտոր ընել՝ միւրեք մը ներքին կազմուածքը զննելու համար. բայց ապահով եմ՝ որ նաև այս բանն չէին ընէր՝ առանց նախ այսպիսի մեծ համարձակութեան մը համար զի Զոգութիւնն և ներուսն խնդրելու ինծի մը:

Սիմըն տիկինն չուտով համարութիւնը կորսնցուց. կը նեղուէր որ այն պանրակներն այնչափ մտնէինքը գիտեն, որք և ոչ իսկ նախաձայն էր կու տային իրեն: Ամեն մարդ չի տրեր հասարակաց տեսարանի նիւթ ըլլալ: Ողջ ողջ հետաքրքրութեան նիւթ ըլլալն իրիստ անհաճոյ էր բարի տիկնոյ, թէպէտ և մեծ յաղթուցութեամբ կրնար ինչն այս պաշտօնը կրակելու կրպճոցոյ սմին աշխարհաց մէջ: Իսկ Սարիանն առատիկ յոգնած էր. վեց ժամուան ընթացքն, քաղցն, յուզմունք և աղուութիւն՝ փափկասուն օրիորդին հոգին քաղած էին: Սրակակայէցք մեռաւորներու մէջ մեծցած գեռահար օրիորդ մը, սրահներու գորգերու և կամ գեղեցկագոյն պարսիկաց գալարի կանաչութեանց վրայ քալելու վարժած: Ճամբուն անհարմութեանց պատճառաւ՝ կոշիկներն ար-

դէն իսկ պատուեր էին, և մացառք դէսստին ստորին մասը բոլորէր էին: Նախընթաց իրիկուներ անգլիական գետնապատան սրահներուն մէջ թէյ խմած էր, Պ. Ուսպիզի զարմանակ պատկերատետրերը (albums) դիտելով, այժմ կը տեսնէր ինքզինքը փոխադրուած թիւս երկրի մը վրայ և վայրենեաց ամբոխի մը մէջ առանց միջանկեալ ընդհատման, և չունէր իսկ նրազ հըսելու միջնորդութիւնը, որովհետեւ ոչ պատկած էր և ոչ նստած, այլ կանգուն կեցած ի կանոն սահմանութիւն իւր փոքրիկ ոտքերուն:

Նոր գունդ մը վրայ հասնելով՝ անհանգուրժելի կ'ընէ մեր գիբըը. աւազակաց խումբ չէր եկողն, այլ դեռ աւելի չարագոյն: Յոյնքն իրենց վրայ կը կրէր պղտիկ, գիբըընք՝ անհամբույր, և անըմբռնելի կենդանեաց ամբողջ քառափող մը, որք գիշեր ցերեկ իրենցմէ անբաժան են, քոյ ժամանակ իսկ զիրենց կ'ըզբազցընեն, և իրենց ցատկաւելոյն և խալթուածներով՝ մտաց աշխոյժ կու տան և արեան շըջանը կ'երապեն: Աւազակաց ողններն՝ որոց քանի մի օրինակ միատարաբանական հաւաքած ուրիշցա մէջ կրնամ ցուցընել, քանի վայրենի, զորանք և թեթեւալարժ են քան զբաղաքաւ ցեացն. այսպիսի մեծ կարողութիւն ունի ազատ օգն: Բայց չուտով անգրագարայ՝ որ իրենց վիճակին վրայ գուն չէին, և երիտասարդ Գերմանացւոյ մը փափուկ մերթին վրայ աւելի սընտուզ կը գտնէին, քան թէ իրենց տեսող կարծրացած կաշւոյն վրայ: Ձիւնեալ գաղթականութիւն մը խեղճ սրունկոց վրայ գիմաց. նախ յօդատնոց մը վրայ սաստիկ մարմնով և զգացի պատեորազմի հրատարակութիւնն էր: Քանի մը վայրկեան վերջ՝ յառաջապահ խումբ մը աշխարհից մը վրայ արշաւեց. ձեռք մէկն հսն կը տանիմ, այս ընդգրկուողութիւնն թշնամոյն գէպ ի ձախ թիւս երազը ընթացիկը յառաջ խաղալու պատճառ կ'ըլլայ, որ և ծնկացա բարձանց վրայ կը ճակատի: Յաղթուած էի և ամեն ընդգրկութիւնն անօգուտ էր: Եթէ մինակ ըլլայի, առանձին անկիւն մը, յաշտութեամբ մը յառաջապահ գնդաց գէմ պատեորազմի ձեռք կը զարնէի. բայց գիմացա կար գեղեցիկն Մարիանա, կեռասի պէս կարմիր և թերեւ նաև ինքն ալ գաղտնի թշնամիէ մը նեղուած: Ոչ գանգաւել կը համարակնէի և ոչ ինքզինքս պատկապանէի: Գիւցաղաբար կը տանէի ցառոցս, առանց աչքերս առ Սիմընս տիկինն վերցընելու: Իրեն համար մարտիրոսութիւն մը կը կրէի՝ որոյ համար ոչ երբեք ըստ արժանւոյն չընորհակալ պիտի գտնէի: Ըստ ինծի՝ վերջապէս ալ չկարենալով համբերել և որոշելով փախաւեամբ ազատիլ սոսկապահ գունդէն՝ որ երթալով կը բազմանար, խնդրեց թագաւորին առջև ելնել: Այս բառս և որ պահպանները իրենց պարտքը կատարելու կոչեց. հար-

ցուցին թէ ուր է Հաճի-Սպաւրոս, և իմացան, որ գրասենեկին մէջ կ'աշխատէր: «Վերջապէս, ըսաւ Սիմընս Տիկինն, կրնամ ութոռի մը վրայ նստիլ»:

Բռնեց թիւս և իր թան ալ գտնողը տուաւ, և համարձակ քայլով սկսաւ իրթալ՝ ուր որ կ'առաջնորդէր մեզ ամբոխն: Գրասենեակն բանակասեղանն շատ հեռու չէր, գրեթէ հինգ վայրկեանէն հոն հասանք:

Թագաւորն գրասենեակն սյնպէս կը նմանէր գրասենեկին մը, ինչպէս աւազակաց բաշխակալոյն՝ բանակատեղոյ մը նմանութիւնն ունէր: Չկար հոն ոչ սեղան, ոչ աթոռ և ոչ որ և իցէ տեսակ կահկարասիք. Հաճի-Սպաւրոս եւեռնոյ մը հովանւոյն ներքե՝ քառակուսի գորգի մը վրայ գերձակի պէս նստած էր. չորս քարտուղարք և երկու ծառայք իւր չորս կողմը կեցած էին: Տասնութեցէն տասնևութ տարուան պատանի մը զառաւած էր անգագար տիրոջ ծըխափողը լեցընելու, վառելու և մաքրելու. քուտին ոսկիէ և աղնի մարգարտեայ վերջաւորք ծխախոտի քսակ մը կախուած էր, և ածախը բռնելու համար՝ արծաթեղոյ ունեղիք մը: Ուրիշ ծառայ մը բոլոր օրը կ'անցընէր սուրբն սկահակները, լրոյ քաւածները և արքունական թերանն անուշաբնելու համար սահմանուած շաքարեղէնները սպարաւորուելու: Փարտուղարք անծանոթ քարի կտորի մը վրայ նստած՝ պատաստուած կեդգներով՝ ծնդաց վրայ կը գրէին. իւրաքանչիւրն իրեն մտ, երկայն պղղընձեայ առւի մ'ունէր, որոյ մէջ կային եղէգն, զմէքն և կաղաւթս: Թանաքայք քանի մի զլանքներ, նման այն զլանքներուն՝ որոց մէջ մեր զինուորներն իրենց արձակուրդի թուղթը կը պահէն, յիշատակարանաց պահեստի սեղ կը ծառայէին: Թուղթն օտար երկրի մէջ շինուած էր, և այս իրեն յառաջի պատճառն ունէր. իւրաքանչիւր թերթի վրայ մեծ տառերով ՊԱԹ բառն կը գտնուէր:

Թագաւորն գեղեցիկ ծերունի մ'էր, տանն առողջ վիճակի մէջ, ուղղորդ, վստի, զսպանակի պէս գիւրտութեք, մաքուր և փայլուն՝ նոր արջ պէս: Իւր երկայն և սպիտակ ընչացքն՝ կրկին մարմարեայ շէտաբարանց պէս կզակէն վար կը կախուէին. գիմացը մնացած մասն բոլորովին գերծուած էր, գանկն անմաղ և փայլուն միշտ ցածրակն՝ ուր սպիտակ մագերես մեծ հիւսմէ՝ գլխանոցին տակ ամփոփուած էր: Ինքն քծաբուրթեւէն հանգարտ և խորհող անձն երկցաւ ինծի. անդգունելի կամեց ապացոյց էին զոյգ մը բաց կապոյտ պզտիկ աչքերն և քառակուսի կզակն: Ինքն երկայնաձև էր՝ զոր գեռ աւելի երկայն կը ցուցընէր խորշոմներուն ուղղութիւնն: Զակտին կնիքներն կարծես թէ մեղտեղէն խորանկալ գէպ յոնքերը կ'ուղղուէին կրկին լայն և խոր ակօքը՝ առաջնաց կէր:

պով գէպ 'ի շրթանց միացած կէտը կ'իջնէին, կարծես թէ պերճեալից ծանրութիւնն երեսին ջգերը վար կը քաշէր: Եթեանսանմայ անձինք շատ տեսայ, մանաւանդ թէ մէկուն ան, զամազնութիւնն ևս ըրի, որ հարկեր տարուան ալ կրնար հասնիլ, եթէ Ողնայրուբի ձեպն-թաց կառքն մարմնոյն վրայն չանցնէր, բայց բնաւ չեմ յիշեր որ Հաճի-Սգաւարտի ծերութեան պէս կայտառ և զօրաւոր ծերութիւն մը տեսած ըլլամ:

Տինոսի և կամ բոլոր Արշակազագոսի կղզեաց զգեստուց տարազը կը կրէր-կարմիր գլխահոցին վարի մասն՝ ձախտին չորս կողմը լայն ծալք մը կը ձևազընէր. սեաւ տառեայ պարեգօտ մը՝ սեաւ մետաքսեայ ժապավնիօք զարդարուած, կապուտակազոյն լայն և բազմաոնալ տաքատ մը՝ որ քսան մեզրէ աւելի բամբակեայ կտաւի տարածութիւն ունէր, և Ռուսիոյ կազուղ և հաստատուն կաշիէ սոնակօղկներ, իւր զոռնեացց միակ հարստութիւնն՝ ոսկինով և ա. կոնքներով զարդարուած քօտին էր, որ երկու կամ երեք հազար Փրանքաց աժէք կրնար ունենալ, և որոյ ծալուածքներուն մէջ կը դռնէր բանուած կաշիներ քսան էր, արծաթեայ պատեմիւ Դամասկոսի դաշոյն մը, երկայն առըրձանակ մը ոսկինով և կարկէհաններով ընդէլուզեալ, և վայելուց գաւազանն:

Իւր պաշտօնէից մէջ անշարժ կեցած Հաճի-Սգաւարտ, միայն մատուցուն և շրթանց ծայրերը կը շարժէր. միջին շրթանց՝ իր նամակները թալու գրելու, իսկ մասանց՝ համարլին հատիկները համարելու համար: Այն գեղէցիկ կաթնազոյն սակէ համարիչներէն մին էր, որք ոչ թէ աղօթելու կը ծառայէր, այլ ակներև անգործութիւն մը զօքսըններու:

Երբ մերձեցանք՝ գլուխը վեր վերցուց, և մեկ նայուածքով գուշակից թէ ինչպիսի դէպք ըլլաւ հոն բերած էին. և ծանրութեամբ մը՝ որ ա. մենեմին ծաղրածութեան հետք չունէր, ըսաւ մեզի. « Բարով եկաք. նստեցէք »:

— Պարոն, գուցէ Սիմէն Տիկինն, ես Ան. գլխադի եմ, և . . .

Հաճի-Սգաւարտ ընդմիջէց խօսքը՝ լեզուն վեր ծնօտին առամանց յեցած՝ լըջելով. և ինչպիսի գեղեցիկ առամոնք. « Քիչ առնէն, ըսաւ. հիմա զբազած եմ »: Ինքն յունարէն միայն գիտէր, իսկ Սիմէն Տիկինն միայն անգղիերէն, բայց թագաւորին կերպարանից այնպէս կենդանի և խօսուն էր՝ որ բարի տիկինը գիւրութեամբ հասկըցաւ ըսածը, առանց պէտք զգալու թարգմանի օգնութեան:

Գեանի վրայ նստեցանք մենք, Տասնուհինգ կամ քսան աւաղակք չորս կողմերնիւ ըլլորեցան, և թագաւորն՝ որ բնաւ պահելու գաղտնիք չունէր, սկսաւ իր ընտանեկան և տուրեա. ախ նամակները հանդարտութեամբ թելագրել:

Զմեք բռնող խմբին գլխաւորն եկաւ ականջէն բան մը փոխաց: Արհամարհական ձայնով մը պատասխանեց. « Ինչ փոյթ թէ նաև միւրրան հասկընայ, ըրծած գէշ բան մը չէ. տմեն մարդ կրնայ լսել. գնան նստէ. — Դու, Սրբոյ, գրէ. առ իմ գօւաւորս է »:

Մատերոյն Զարտարութեամբ մը քիթը մաքրէց, և ծանր և անուշ ձայնով մը սկսաւ.

« Սիրելի այկիս (սիրելի զաւակս). Խորոյցի վարժապետուհին կը գրէ ինձ՝ որ առողջութիւնդ հաստատուած է և թէ գէշ հարեալութ՝ ձեռուան օրերուն հետ անցեր է: Բայց քու աշխատանացը նկատմամբ տօգոհութիւն կը լըսեմ՝ և կը գանդատուի թէ աղբիլ ամառնի սկիզբն է՝ որ վեր չես ուսանիր: Մարտի Տիկինն կ'ըսէ՝ որ երթալով անուշադիր կ'ըլլաս, ցրուած մտք. և զքեզ գրքիդ վրայ յեցած կը տեսնեն, աչքերդ յօգս, իրբե թէ ուրիշ բաներու վրայ պատէ: Որպիւր կը ըսեմ քեզի դեռ. քիչ է թէ անպէք է անխոյն աշխատիս, իմ բովանդակ կենաց օրինակին հետեւ. եթէ ես ուրիշ շատերուն պէս անգործ ըլլայի, ընկերութեան մէջ ունեցած աստիճանիս չէի կրնար հասնիլ: Ար փափագիմ որ ինձի արժանաւոր ըլլաս, և ահա ասոր համար այսպիսի մեծամեծ ծախք կ'ընեմ քու դաստիարակութեանդ համար: Գիտես որ ոչ երբեք զայցայ քեզի վարժապետ կամ գիրք՝ չոր խնդրեցիր, բայց պէտք է որ դրամս աղբիլ, նաւոր ըլլայ: Վալթեր Սկոլս, ինչպէս նաև Ռոպինսոնն և միւս ամէն փափաքած անգղիերէն գրքերդ՝ ի Պիրէոն հասած են. Հերմէս փողոցին մէջ քնակող մեր բարեկամաց ձեռքով մաքսատնէն հանել տուր զանոնք: Անոնց հետ ի միասին կ'ընդունինք նաև ինքզրած ապարանշանք և պողովմանդ գործին՝ զգեստներուց ստորին մասերը ուսուցչիկ պահելու համար: Եթէ ունեցած Վիէնայի գաշնակդ, ինչպէս կ'ըսես, աղէկ չէ, և թէ անհրաժեշտ հարկ է Քլէյէլի գործի մը գինը՝ ղայն ալ կ'ուշենաս: Հնձոց վաճառքէն վերջը՝ մէկ կամ երկու գեղերու այցել. յոյրնամ պիտի ելնեմ, և օտտանան անգամ պիտի չկարենայ արգելելու զիս՝ անոնցմէ քեզցնիկ գաշնակի մը գինը գանձելու: Եւ ալ քեզի պէս կը մտածեմ՝ որ երաժշտութիւն գիտեալու պէտք ունիս. բայց ամէն բանէն աւալ օտար լեզուները պէտք են գիտնալ: Աւերակի օրերդ՝ ինչպէս որ ըսի քեզի՝ այնպէս անցուն, և մեր բարեկամաց ցուցած հաճութենէն օգուտ քաղէ: Պետք է որ զաղցիերէն, անգղիերէն և մա. նաւանդ գերմաներէն կարենաս խօսիլ. վասն զի դուն այս պլոտիկ անշան երկրիւ մէջ պիտի չընախիտ, և կ'ընտրեմ անաւանդ մահճ տեսնել՝ քան թէ Յոյնի մը հետ ամուսնանալու: Թա. գաւորի դուստր ըլլալով՝ իշխանի մը միայն կըրնայ հարսն ըլլալ. չեմ ըսեր առաւանդուն իշխանի մը, ինչպէս են բոլոր մեր Փանաբոգք, որք կը

Հաշիւք լեբանց Թագաւորին Ազգային Ընկերութեան :

Փորձ 1855-56

« Բանակաւայր » Թագաւորին, 30 Ապր. 1856.

« Տեաւրք :

« Պաշտօնակալին » զոր ձեր վատահոգութեամբն պատուեցիք, այսօր չորեքտասանհարոյդ ան. գիտնէ, իւր տարեկան աշխատութեանց հաժմաօտ բովանդակութիւնը կը ներկայացընէ ձեզ՝ ձեր հաւանութիւնն և հաճութիւնն ընդունելու համար: Թագաւոր վարպետին՝ որ Ա. Թեհերի արքունական նոտարն էր, պաշտօնարար նին մէջ՝ մեր ընկերութիւնը կազմող մուրհակին կնքուելէն 'ի վեր, ոչ երբեք մեր ձեռնարկն այսչափ արգելներու հանդիպած է, ոչ երբեք մեր աշխատանքն այսչափ ծանր գոգաւորու թիւններով խափանուած: Այսպիսի յատուկ ազգային կարգադրութեան մը կանոնաւոր ընթացքը պէտք եղաւ արտաքոյ կարգի զգուշութեան մը դիմաց և երբեք բանակաց սաջին տակ պահել, որք էլ թէ թշնամի չէին, գէթ լաւ աչքով չէին տեսներ զմեզ: Պէրսոն զինուոց զօրութեամբ դրաւեալ, Տաճկաստանի սահմանագլուխն հսկողութեան ներքեւ, այնպիսի նախանձաւորութեամբ՝ որոյ նմանն չի գտնուիր պատմութեանց մէջ, մեր գործունէութեան աստաբարկը կ'սկսիտիւն, և մեր եռանդեան դիմաց անխորտակելի պատուարներ են: Այս անձուկ ասպարիղին մէջ անձկաբոյն ևս էին մեր եկամուտներն՝ ընդհանուր չաւարտութեան, դրամայ տակաւութեան և հնձոց անբաւակաւնութեան պատճառաւ: Զիթեմիջ ինչ որ կը յուսացուէր՝ չկրցան արգելանքերէլ, հունձք չափուոր եղան, իսկ այգիք գուռ ասպականիչ սուռնկէն չաղատեցան: Այսպիսի պարագայից մէջ գոգուոր էր իշխանութեանց զիջմանէն և հայրապետ Վարդութեան մը քաղցրութենէն օգուռ քաղել: Մեր ձեռնարկն երկրին յաջողութեանց հետ այնպէս անբաժանելի կերպով կապուած է՝ որ հասարակաց յաջողութեան ժամանակ միայն կը զարգանայ, և ենթակայ է ընդհանուր աղիտից ազդեցութեան, վասն զի բան մը չունենցողէն՝ բան չի կրնար առնցըցուիլ և կամ ոչինչ բան:

« Ոտարական ճանապարհորդք » որոց հետաքրքրութիւնն թէ թագաւորութեան և թէ մեզի շատ օգտակար է, խիստ ցանցաւ են: Անգղիացի հետաքրքիր ճանապարհորդք՝ որք երբեմն մեր եկամտից գլխաւոր աղբիւրն էին, բոլորովին դադարեցան: Երկու երկաստարգ Ամերիկացիներն՝ որք Պետտիլիկի ճամբուն վրայ բռնուեցան, իրենց փրկուիքը զլացան մեզի: Անվարտահոգութիւն մը՝ զոր փաղկոյ և Անգղիոյ

քանի մի լրացիրներն կը տարածեն, կը հեռացընէ մեզմէ այն ամէն տնձինք՝ որոց բռնուելն մեզի շատ օգտակար պիտի ըլլայ:

« Եւ սակայն, տեսքը, այնպիսի է մեր ընկերութեան կենդանութիւնն՝ որ երկրագործութենէն, տուրեաւակի արուեստներէ և վաճառականութենէն աւելի լաւ դիմացաւ այս չաւարախառնութեան: Զեր առ իս յանձնած գրաւագլուխներն չաճեցան՝ թէպէտ և փափաքածու նուազ, սակայն յուսացուածէն շատ աւելի: Անոր վրայ երկար չեմ ուզեր խօսիլ, թող հայիւններն խօսին: Թուաթանութիւնն 'ի մտութենէն աւելի ճարտարախօս է:

« Ընկերական գրամագլուխն՝ որ նախ 50,000 ֆրանք էր, 500 ֆրանգաց արեւելքով բաժանորդագրաց էրէք անգամ հակազէտէն չըջանի մէջ մահկոցին՝ եղաւ 120,000 ֆրանգ:

« 1855 մայիս 1էն մինչև 1856 ապրիլ 30, բովանդակ մուսթերիս կը հասնի 261,482 խառն ֆրանգաց գուճարի:

« Բաժնե Ժախքերիս հետեւաններն են.

Եկեղեցեաց և Վանքերու հատուցեալ տասանորդք	26,148
Դրամագլուխն շահն ըստ օրինական գնահատութեան 10 առ 100.	12,000
Վարձք և կերակուր 80 անձանց, 650 ֆրանգ իւրաքանչիւրն	52,000
Նիւթական պիտոյք, զէնք. և այլն.	7,056
Թեքէի ճամբուն նորոգութեան համար, որ անգնուիլ եղած էր, և ուր ճանապարհորդք չէին գտնուիր բռնուելու համար	2,540
Արքունի ճանապարհաց վրայ հսկողութեան ծախք	5,835
Փրակներէ կ'ծախք	3
Փրակն մի լրագրաց գրամական օգնութիւն	11,900
Տնտեսական և գաղտնաստանական դործոց զոտազան Պաշտօնակալաց 'ի քաղաքութեան տրուածներն	18,000
Իրամարն	135,482

Եթէ մեր հասից բովանդակ այս խառն հաշուեգրութեան վերածուի, կը մնայ զուտ շահ

Ըստ օրինաց ընկերութեանս՝ այս մնացորդն հետեւեալ կերպով բաժնուած է:

Դրամագլուխ պահեստի Աթենքի գրամատեղանոյն յանձնուած	6,000
Երրորդ մասն գործակալի արժուած	40,000
Բաժանորդաց մէջ բաժնեւու համար սահմանուած	80,000

Իւրաքանչիւր բաժանորդացին ըլլալով 333 ֆրանգ, 33 հարիւրչեայ:

« Այս 333 ֆրանգաց և 33 հարիւրչից վրայ աւելցուցէք նաև 50 ֆրանգ շահուց և 25 ֆրանգ պահեստի գրամագիրն, իւրաքանչիւր բաժանորդօգտին կ'ըլլայ 408 ֆրանգ և 33 հարիւրչից: Ուրեմն ձեր ստակն գրեթէ 100ին թիւը շահուց դուռն է: »

« Ասոնք են ահաւասիկ, տեսքը, վերջին արշաւանայց արգասիքներն. դատաստան ըրէք ուրեմն ապագային վրայ, յորում օտարաց տիրապետութիւնն մեր երկրին և մեր գործոց վերայն է պիտի վերցուի: »

Թագաւորն այս հայելն թելադրեց առանց ուրիշ յիշատակագիրներ քննելու, առանց թելոյ մը վրայ տատամներու, առանց բառի մը վերայ մտածելու: Երբեք չէի կրնար հաւատալ թէ այս հասակի մէջ ծեր մը՝ այսքան սուր յիշողութիւն կարենայ ունենալ. իւր կնիքը գրաւ երեք նամակներուն վրայ. այս է իր ստորագրելու կերպն: Վարժութեամբ կը կարգայ, բայց գրել ուսանելու ժամանակ չէ կրցած գտնել. կ'ըսուի թէ Կարողոս Մեծն և Մեծն Ալֆրետ նոյնպիսի վիճակի մէջ կը գտնուէին:

Միջդեռ Տէրութեան ստորին աստիճակիքը նոյն օրուան նամակներն ընդօրինակելու զբաւումն էին, զանոնք դիւանին մէջ դնելու համար, ինքն նոյն օրուան մէջ՝ իրենց ջոկատներովն յետոս դարձած ստորակարգեալ պաշտօնատեալաց մետք և ունիկորուքիւն շնորհեց: Ասոնցմէ իւրաքանչիւրն իրեն գիմարը կը նստէր, աջ ձեռքն կուրծքին վրայ դնելով՝ կը բարեկեր զինքը և համառօտ կերպով իւր հայելը կու տար, սա. կայրն ամենաճիշդ ստուգութեամբ: Կ'երգնուէ՞ որ Սուրբ լուգովիկոս իւր կաղնւոյն ստորոք բազմեալ՝ Վէնսանի բնակչաց այսպիսի յարգելի և պատկառելի չէր երեցած:

Առաջին ներկայացողն կարծահասակ և ձառաքեմ մէկն էր, գեղմ մը՝ որ ոճրագործութեանց գատարաններու մէջ միայն կը գտնուի: Քորֆուի կղզիաբնակ մ'էր և իւր բնիկ էր. կրէն հայածական՝ քանի մի հրդեհնեռն պատճառաւ՝ ընդունելութեան գտած էր ի չառի՝ Սպարտան, և իւր հանձարն զինքն այն աստիճանին բարձրացուցեր էր: Բայց թէ իր զլխաւորն և թէ ստորակարգեալք՝ իրեն մեծ յարգ մը չէին տար. կը կասկածուէր թէ աւարին մէկ մասը ի շահ անձին կը գործընէ, իսկ թագաւորն ամենայն խստութեամբ ուղղամտութիւն կը պահանջէր, և երբ գմէկն յանցաւոր գտնէր, նախատական կերպով կը վնասէր զինքը ծանր ծաղրածութեամբ ըսելով. « Ինչո՞ւ աստիճակէ երթի: »

Նաճի՝ Սպարտոս Քորֆուցիին հարցուց. « Ի՞նչ ըրիր: »

— Տասնօւհինգ ընկերներովս Միծառնց հեղեղատը ի՞նչ, Թեբէի ձամբուն վրայ, ուր բանակին ջոկատի մը հանգիպեցայ. քանի՞նգն է

զինուորքը կը կազմէին զնկատն:

— Ուր են իրենց հրացաններն:

— Իրենց թողուցի, վասն զի ամէնն ալ միտցաւոր հրացաններ էին և պտախճ (capsule) չունենայունս համար՝ մեղի բանի չէին դար:

— Աղէկ, վեհքը:

— Վաճառքի օր էր, զարժողները բռնեցին:

— Քանի՞ հոգի:

— Հարիւր քառասուններկու անձինք:

— Ուրեմն հեղ ի՞նչ բերիք:

— Նապար վեց ֆրանգ և քառասուններեք հարիւրչեայ:

— Մարդ գլուխ ետը ֆրանգ. քիչ է:

— Շատ բան է. գեղացիներն է:

— Ուրեմն իրենց վաճառքն չէին ծախած:

— Ոմանք ծախած էին, այլք դնած էին: »

Քորֆուցին թիւին տակն ունեցած ծանր պարկը բացաւ. մէջը գտնուածն աստեղագլորաց առէն պարպեց, որք սկսած համբել գումարը. որ կը բաղկանար երեսուն կամ քառասուն մեքսիկացի դահեկաններէ. քանի մի բուռն՝ աւարտակացի ճուռնիկներէ և արծաթախառն դահեկանաց մեծաթիւ քանակէ մը: Քանի մի պատըտած թուղթեր գրամներուն մէջ խառնուած էին, որք տանական ֆրանգաց արժեքիք գրամով զլծեր էին:

« Գոհարներ չունին, հարցուց թագաւորն:

— Այ:

— Կանայք չկային ուրեմն:

— Բան մը չգտայ՝ որ մէկտեղ բերելու նէ:

զուլթիւնն արժէր:

— Մտախի վրայ տեսածս ի՞նչ է:

— Մտանքի մը:

— Ոսկի՞:

— Կամ պղծէ, չեմ գիտեր:

— Ուսի՞նց է:

— Երկու տօնս կայ որ դնած եմ:

— Եթէ դնած ըլլայիր կը գիտնայիր՝ ոսկեայ է թէ պղծէ: Տուր զայն: »

Քորֆուցին տահաւութեամբ հանեց մատանին, որ անմիջապէս պղծիկ տրեկը մը մէջ զընդունաւ, որ լի էր գոհարներով:

« Քու գէշ դաստիարակութեանդ պատճառաւ կը ներեմ քեզ: Քու գաւառիդ մարդիկն աւագակուլթիւնն անպատիւ կ'ընեն՝ մէջը խառնութիւն խառնելով: Եթէ խառնես մէջ միայն Բոնիպիներն ունենայի՞ պիտի բռնադատուէի ձամբաներուն վրայ անցորդներն համբելու և գրամն ընդունելու համար գործիներ գնել, ինչպէս լոնտայրի Ալեքսանդրահայեթին գանձերուն տուչ կան: Ուրիշ մը: »

Այս նոր եկողն քաջառողջ և հաճոյատեալի գէր պատանի մ'էր, Զակատին հաւասարած կլոր աչքերն աննեղութեան և պարզամտութեան նշաններէ: Ինչպէս ինքն միջոց կիրառաց չըթանց միջէն սպիտակաւաւալ տատանց կրկն

շարքն կը տեսնուէին: Առաջին նշուումը զիս հրապուրեց, և կ'ըսէի ինքերենս՝ Թէպէտ լար ընկերութեան մէջ մտած է, սակայն օր մը պի. տի դառնայ յուշդ շանսպարհն: Իմ կերպա. րանքս ալ իրեն հաճելի տեսնուեցաւ, վասն զի թաղաւորին գիմացը նստելէն առաջ՝ քաղաքա. վարութեամբ մը բարեկեց զիս:

Հաճի՛ — Ագաւորս ըսաւ իրեն. « Ի՞նչ ըրիր, վասիկ »:

— Երեկ իրիկուն վեց ընկերներովս Բիկա. տիս հասայ, որ Միմպէլիս սինկիտիկոսին գիւ. ղէն է:

— Աղէկ:

— Միմպէլիս ըստ սովորութեան հոն չէր գտնուեր, բայց իւր աղագականն, վարձուոր. ներն և վարձաբնակներն սուռներին էին և կը քնանային:

— Աղէկ:

— Ի՞նչանը մտայ. արթնցողցի գլխաւորը, իրմէ քսան և հինգ խուրձ յարգ. գնեցի, և իւր և վճարք՝ սպաննեցի զինքը:

— Աղէկ:

— Յարգը տներուն չորս կողմը գրինք, որք տախարիկս կամ՝ ուռնէնով շինուած են, և եօթը տեղէ միանգամայն կրակ տուինք. լուցա. փայտք ընտիր էին, հեւսիսային հողմն կը շնչէր և ամէնն ալ բորբոքեցան:

— Դատ աղէկ:

— Մենք կամաց կամաց գէպ 'ի ջրհորները քաշուեցանք: Բոլոր գիւղն շիջ արձակելով արթնցաւ միանգամայն, մարդիկ իրենց կաշիէ հոլլերով ջուր հանելու վազեցին, յորոց չորս օրդի ջրը մէջ ընկնելով՝ խլղեցինք, զորս չէինք շանչնար, մեռնէին աղատեցան:

— Աղէկ:

— Գեղը դարձանք. մարդ չկար, աղայ մը միայն իր ծնողացմէ մոռցուած՝ բոյնէն ինկած ագուաւի ձագի պէս կը պոռար. գեռ այրող տան մը մէջ նստեցի, և ալ ձայնը չսեցինք:

— Աղէկ:

— Այն ատեն խանձող փայտեր առինք և սկսանք ձիւնէններն այրել, որ ըստ աղէկ յա. ընդեցաւ: Ճամբայ ելանք գէպ 'ի բանակաւայն. շամբուն կէսն հասած՝ ընթրեցինք և քնացանք, և ժամը իննին ողջ առողջ և առանց այրուելու մտանք բանակը:

— Աղէկ: Միմպէլիս ծերակոյտն այլ ևս մեզի գէժ պիտի չխօսի: Ուրիշ մը »:

Վասիլ գուրս ելաւ նորէն քաղաքաւարու. Թեամբ զիս ողջունելով, բայց ես զինքը չբա. րեկցի:

Իրեն տեղ անմիապէս առաջ մտեաւ զմեզ բռնող մեծ սատանան, Նիզիան գիպուածով մը՝ պիս Թատերախաղին մէջ յորում գեր մը ձե. ւացնելու կոչուած էի, սկիզբն տուող հեղե. նակի Սոփոկլէս կը հռչակէր: Երբ իւր պատմու.

Թիւնն սկսաւ, պաղ սարսուռ մը դգացի երակ. ներուս մէջ: Վ'աղաչէի Սիմըն Տիկնոջ որ չըլ. լայ Թէ անխոհեմ խօսք մ'ըսէ. նա պատասխա. նեց որ Այդդիտցի եմ և գիտեմ ինքզինքս կա. ռավարին: Աղաչեց թագաւորն որ լռէնք և ճա. տախօսին տեղի տանք խօսելու:

Նստի մեզմէ յափշտակած իրերը մէլտեղ դը. րաւ. ապա գօտիէն գուրս հանեց քառասուն աւտարիական տոշար, որ կ'ընէ չորս հարկը եօթմասուն Փրանդ, իւրաքանչիւր տոշարն 11 Փրանդ և 75 հարկւրչեայ արժէիւք: « Տու. գալձք, ըսաւ, Կաստիա գիւղէն էն, միացածն միլլոտներն տուին ինծի: Հրամայեցի ինծի չըջնայի տեղերը աւտրել, ես ալ գիւղէն ըս. կըսայի »:

— Փէշ ըրած ես, պատասխանեց թագա.ւորն: Կաստիա գիւղին բնակիչք մեզի դրացի են, պէտք էր թողուլ զիրենք, Բ'նչ ապահովութիւն կրնայք ունենալ, եթէ մեր մերձաւորներն մեզի թշնամի ընենք: Դարձեալ ասոնք քաջ մարդիկ են, կրնան պէտք եղած ժամանակն օգնել մեզի:

— Ո՛հ, ամխաբօրծնէնք բան մը չաւի. դեռ իրենց հետ չիօտած՝ անտառներու մէջ աներկ. լայն եղան: Բայց դատաւորին օշնակաւը յօ. գացաւ ունէր, զինքը առնը դառայ:

— Ի՞նչ ըրիր իրեն:

— Ստակ ուղեցի. պնդեց որ չունիմ: Իրեն կատարէն հետ պարկի մը մէջ գրի զինքը. չեմ գիտեր Թէ կատարն ինչ դուռ իրեն, բայց ըս. կըսաւ պոռալ՝ որ դանձա տան ետեկ կողմը մեծ քարի մը տակն է: Հոն դառայ տոշարները:

— Աղէկ չեա ըրած, ինքը բոլոր գիւղը մեզի գէժ պիտի դրգաւ:

— Ո՛հ, ո՛չ. զինքը Թողուցած միջոց՝ պար. կը բանալու մոռցայ, և կատուն իրեն աջքերը կերած պիտի ըլլայ:

— Դատ աղէկ... Բայց լսեցէք ամենքնիդ ալ, չեմ ուզեր որ մեր դրացիներն անհան. գիտ ընենք: Գնա՛ »:

Մեր հարցաքննութիւնն պիտի սկսուէր: Հա. ճի՛ — Ագաւորս փոխանակ զմեզ իւր գիմացը կո. չելու, ծանրութեամբ մը ելաւ և եկաւ մեր քո. վը դանդի վրայ նստեցաւ Այս մեծարանաց կերպն մեզի, յաղողութեան մը Նշան երեցաւ: Սիմըն Տիկինն հարցաքննութեան խիստ կեր. պով պատասխանելու պարտաստուեցաւ: Իսկ ես գուշակելով Թէ ինչ կրնար ըսել, և ճանչ. նալով միանգամայն իր լեզուին չափ չունենալը, իբրեւ Թարգման Ծառայելու գիւղի թագաւորին: Պաղ կերպով մը շնորհակալ եղաւ ինծի և Գուր. Փուլցին կանչեց՝ որ անգիտէին կը խօսէր:

« Տիկին, ըսաւ Թագաւորն Սիմըն Տիկնոյ, զայրացած՝ կ'երեւաք. զձեզ հոս առաջնորդող մարդկանց վրայօք դանդաղ մ'ուշիք »:

— Սոփոկլէս բան. ձեր սրիկաներն զիս բըռ. նեցին, փոշի մէջ գետին ձգեցին, մերկացու.

ցին, տկարացուցին և սովորեկ ըրին:

— Խնդրեմ թողութիւն ըրէք. բռնադատեալ եմ անկիրթ մարդիկ գործածելու: Հաւատացէ՛ք, տիկին, որ ես այդպէս չեմ հրաժայած վարուելու: Անգղեացի էք:

— Անգղեացի և Լոնտրայէն:

— Գնացել եմ Լոնտրա. զԱնգղեացիս կը ճանչնամ և կը յարգեմ. գիտեմ որ ազնի տ. խորժակ ունի, և տեսաք որ ահապարեցի ձեզի զովացուցիչներ մատուցանելու: Գիտեմ որ ձեր երկրին կանայք ժայռերու վրայ ընթանալ չեն սիրեր, և կը ցաւիմ որ թող չեն տուած ձեզի ձեր քայլափոխովը քալելու: Գիտեմ որ ձեր աղգին մարդիկ ճանապարհորդութեան միջոցի, բեռն կրակուր եղած պիտոյքը միայն կ'առնեն, և պիտի չներեմ Սոփոկլէսի գէշ մերկացնելուն համար քա՛նաւանդ եթէ ազնուական էք:

— Լոնտրայի ամենէն ազնուագոյն ընկերութեան կը վերաբերիմ:

— Խնդրեմ ընդունեցէ՛ք ձեր դրամը: Հաւրուստ էք:

— Տարակոյտ չկայ:

— Այս սուգին ձերինն չէ՞:

— Աղջկանս:

— Նշոյալս ինչ որ կը վերաբերի օրիորդին՝ խնդրեմ ետ առնէիք: Եստ հարուստ էք:

— Եստ հարուստ:

— Ասոնք ալ պարոն ձեր որդւոյն են:

— Պարոնն իմ օրդիս չէ. գերմանացի է: Ես անգղեացի ըլլալովս ինչպէս կրնամ գերմանացի որդի ունենալ:

— Եստ իրաւացի է: Քսան հազար ֆրանք եկամուտ ունիք:

— Գեռ աւելի:

— Գորգ մը բերէք այս տիկնոջ համար: Ուրիշն երեսուն հազար ֆրանք եկամուտ ունեցող էք:

— Գեռ աւելին ունիք:

— Տմարդի մէկն է Սոփոկլէս, ես զինքը կ'ուզեմ: Լողովէ՛ք, ըսէ որ այս տիկնոջ ճաշ պատրաստեն: Կարելի է, Տիկին, որ միլիոնի տէր ըլլաք:

— Այո, հմ:

— Իսկ ես կ'ամբնջամ որ ձեզի հետ այսպէս վարուած են: Անշուշտ յԱթէն շատ ծանօթներ ունիք:

— Անգղեջ գետպանը կը ճանչնամ, և եթէ ուզած ըլլայիք....

— Ո՛հ, տիկին.... Վաճառականներ և սեղանաւորներ ալ կը ճանչնամ:

— Եղբայր՝ որ Աթէնք կը բնակի, քաղաքին մէջ շատ սեղանաւորներ կը ճանչնայ:

— Կը հիանամ զարմանեմ: Սոփոկլէս, հոս եկուր, թողութիւն խնդրէ այս տիկնայցմէ:

Սոփոկլէս քեզին տակէն չեմ գիտեր ինչպիսի ներուած խնդրելու բառեր մըմտաց: Թագաւորն

ըսաւ առ Սոփոկլէս.

— Այս տիկնայք անգղեացի տղնուականուհիներ են, միլիոնէն աւելի հարստութիւն ունին. Անգղեջ գետպանաւան հիւրերն են. եղբայրնին՝ որ Աթէնքի մէջ կը բնակի, քաղաքին բոլոր սեղանաւորները կը ճանչնայ:

— Այնպէս է, գոչեց Սիմըն տիկինն: Թագաւորն շարունակեց.

— Իրենց վիճակին պատշաճ յարգանք պէտք էիր վարուիլ իրենց հետ:

— Եստ լաւ, ըսաւ Սիմըն Տիկինն:

— Քաղցրութեամբ զերեմէ հոս պիտի բերէր:

— Ինչու համար, մըմտաց Մարիաննա:

— Եւ իրենց բեռներուն գալելու զգուշանալ. Երբ լեբան վրայ այս տիկնայց աստիճանի անձանց հանգիստելու պատիւը կ'ունենայ, յարգանք պէտք է ուղղուէք, և մեծարանք բանալ կը բերէք. ամէն զգուշաւոր խնամքով պէտք է պահուին, քաղաքավարութեամբ կենաց ամէն հարկաւոր բաները մատակարարուին իրենց, մինչև որ իրենց եղբայրն կամ իրենց գետպանն մեզի հարիւր հազար ֆրանքի փրկանք մ'ուղարկեն:

Թշուա՛ն Սիմըն տիկին, սիրելի Մարիաննա. ոչ մին և ոչ միւսն այս հետեանքին կը սպասէին: Իսկ ես յանկարծակիի չեկայ, վասն զի գիտէի թէ ինչպիսի խորամանկ խաբեբայի հետ էր գործերս: Համարձակութեամբ խօսիլ սկսայ և շտկէ շիտակ ըսի իրեն. « Կրնաս քեզի պահել ինչ որ գոցան ինծմէ քու մարդիկդ, վասն զի անկէ աւելի բան մի յուսար ինծմէ: Ես աղքատ եմ, հայրս բան չունի, եղբայրս միշտ չոր հաց կ'ուտեն. ոչ սեղանաւոր կը ճանչնամ և ոչ գետպան, և եթէ փրկանք մը ընդունելու յուսով զիս պիտի կերպրես՝ կ'երգնում որ ի միտս անձիդ պիտի ըլլայ »:

Ատենին մէջ այս ըսածներու չհաւատալու չնկող մը լսուեցաւ. բայց Թագաւորն կարծես թէ հաւատաց խօսելիս:

— Եթէ այդպէս է, ըսաւ, հակառակ կամացդ զբեղ հոս չեմ պահեր. մահաւանդ թէ զբեղ քաղաք կ'ուզեմ զրեկել Տիկինն առ իւր եղբայրն նամակ մը կը յանձնէ քեզի և այսօր ճամբայ կ'ընեն: Սակայն եթէ պէտք ունիս մէկ կամ երկու օր լեբան վրայ կենալու, քեզի առաջնականութիւն ալ կ'ընես. վասն զի կ'ենթադրեմ որ մինչև հոս այս մեծ արկղովն մինակ երկիրը դիտելու համար չես եկած:

Այս պատասխանն ինծի համար մեծ սփոփանք մ'եղաւ. չորս կողմն գոհութեամբ մը նայեցի. Թագաւորն, իր ասենաղայրներն և զինուորներն այնչափ սարսափելի չեղեցան ինծի: Մերձաւոր ժայռերն աւելի գեղեցիկ երևցան, երբ զանոնք հիւրի աչքով սկսայ դիտել և ոչ կալանաւորի: Աթէնք տեսնելու փափաք

մեղմացու մէկն, և մտածեցի երկու կամ երեք օր լեւան վրայ տնջնել: Կը մտածէի որ իմ խորհուրդներս Մարիանայի մօրն անօգուտ պիտի չըլլային: Բարի տիկինն այլալուծեան վիճակի մէջ էր, որով կրնար իրեն կորստեան պատճառ ըլլալ: Եթէ յանկարծ փրկանքը հա-տուցանել յանձն չառնէր, Անգղիա գեռ իրեն օգնութեան չհասած՝ շնաշխարհիկ անձի մը վը-րայ Թոռաւուծիւն մը պիտի բերէր: չէի կըր-նար հեռանալ՝ առանց պատմելու իրեն իրեկ հանուն իր վարման՝ Մխարայի պզտիկ աղջկանց պատմութիւնը: Դեռ ինչ ըսեմ, գիտէք առ տնկարանութիւն ունեցած սէրս: Պառնեսի ծաղիկն ապրիլի վերջերը շատ հրապուրելի է: Լեւան վրայ հինգ կամ վեց հազուադիւտ և ա-նուանի բոյսեր կը գտնուին: Վն մանաւանդ Պորիանս փոփոխուշ, զոր գտաւ և անուանեց Պ. Պորի—Սէն—Վէնսան: Կրնայի՛ այսպիսի դա-տարի մը Թողուլ տնկոց հաւաքման մէջ, և Համագործի Թանգարանին ներկայանալ՝ առանց Պորիանս փոփոխուշի:

Պատասխանեցի Թագաւորին. « Կ'ընդունիմ՝ ձեր ապաքնականութիւնը, բայց պայմանաւ մը:

- Ինչ պայման:
- Արկղեկս առ իս դարձնելու:
- Ազգի, բայց նոյնպէս պայմանաւ մը:
- Ինչպիսի՛ պայման, տեսնե՞ք:
- Ըսէ ինծի թէ քեզի ինչ բանի կը ծառայէ:
- Թող այդ այլ արգելք մը չըլլայ: Ժողոված բոյսերս մէջը գնելու կը ծառայէ:
- Ինչու համար բոյսեր կը հաւաքես. Թե-րեւ ծախելու համար:
- Այ՛, վաճառական չեմ, գիտնական եմ ։

Ձեռքն ինծի երկնցուց և յարկաւ ուրախու-թեան մը ըսաւ. « Կը հիւսնամ: Գիտութիւնն գեղեցիկ բան է. մեր պապերն իմաստուն էին. մեր Թոռներն ալ թերեւ ըլլան. իսկ մերք ժա-մանակ չունեցանք: Ձեր երկրին մէջ գիտուն-ներն մեծ յարգ ունին:

- Շատ մեծ:
- Բարձր աստիճաններ կը արու՛մ իրենց:
- Երբեմն:
- Ազգի կը վճարեն:
- Ըսե բաւականին:
- Կուրծքերնուն վրայէն պզտիկ ժապաւեն-ներ ալ կը կախեն:

— Երբեմն երբեմն:

— Սոցի գ թէ իւրաքանչիւր քաղաք անոնց քաղաքակցութեան պատեւը իրարմէ կը յափը-տակեն:

- Գիտմանից մէջ այդ ստոյգ է:
- Եւ թէ՛ իրենց մահն հասարակաց Թշուա-ռութիւն մը համարուած է:
- Տարակոյտ չկոյ:
- Ըսածներուդ համար ուրախ եմ: Ուրեմն քաղաքացիներէդ գանգաւտ մը չունի՞ն:
- Մանաւանդ թէ հակառակը. իրենց առա-տածեանութեամբ է՝ որ Յունաստան կը քալեմ:
- Իրենց ծախքով կը ճանապարհորդես:
- Տասն ամիսն ՚ի վեր:
- Ուրեմն շատ գիտուն ես:
- Վարդապետ եմ:
- Գիտութեան մէջ գեռ աւելի բարձրագոյն աստիճան կայ:

- Ո՛չ:
- Ձեր քաղաքը քանի՛ վարդապետ քեզ կան:
- Ստոյգը չեմ գիտեր. բայց հոն այնչափ ուսուցիչ չկայ՝ որչափ յԱթէնս զբարձրք:
- Ո՛հ, ո՛հ. քու քաղաքդ քեզի պէս հա-զուադիւտ անձն մը պիտի չգրկեմ: Համագործի պիտի գտնուան, պարոն վարդապետ. ինչ պիտի ըսեն եթէ լսելու ըլլան՝ որ մեր լեւանց վրայ բանտորեկաւ եա:
- Պիտոր ըսեն թէ գծախտութիւն մ'է:
- Հապա ուրեմն. Համագործի քաղաքն աւե.

չի յանձն պիտի առնու տասնուհինգ հազար Ֆրանգ զոհել. քան թէ քեզի պէս անձ մը կոր-սընցընել: Ա՛ռ քու արկղդ. քալէ, փնտռէ, բոյսեր հաւաքէ և քու ուսմունքդ առաջ տար: Ինչու համար այս դրամդ դրապանդ չես գներ. քուզդ է. ես գիտունները շատ կը յարգեմ և կը զգուշանամ՝ զիրենք կողոպտելէն: Իսկ քու քաղաքդ բաւական հարուստ է իւր փառքը փրկանաւորելու համար: Երջանի՛կ երիտա-սարգ, այսօր կը յանձնաւ թէ ուսուցիչ պա-տուանունն քու անձնական յարգդ ո՛րչափ կ'ա-ւելցընէ. մէկ հարկուրեւայ մ'ալ փրկա՞նք պի-տի չուզէ՛ ինչի ինծի պէս տգէտ ըլլայի:

Թագաւորն որ իմ առաջարկութեանցս ուշ գրաւ և ոչ Սիմէնս արկիւղը բողբոջներուն: Ժո-ղովքը վերցուց և մասնանիշ ցըցուց մոզի սե-ղանատունը:

Կը շարունակուի:

Ե. ԱՊՈՒ

ԾԱՆՈԹ. — Հանգիստ յաղորդ եռամեակայ Պրալը պիտի նուիրենք բովանդակ 'ի ծանօթութեան նոր երկատրու-թեան Շ. Դեւոյ Դ. Արշակ վարդապետի, որ մեր է յաւարտումն տպագրութեան, և կը կոչուի ՍԾԱՌԱՅՆ, ԱՄԵ-հաղորդում Հայկա՛ն Արկիւղ. — Սղի Պրալի մէջ՝ յէջ 201, երկրորդ սիւնակ, տող 50-51, տպագրական զերպակաւ տեղի ունեցած խառնակ տողերը՝ ուղիղ կարգաւու և հետեան կերպով. ւ Եւ առ Ասանէթ. Ահաւանի եմ, տեղ: Եւ առ Ասանէթ. Եւ նիստ 'ի միջի մերում, և այլն ։